ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1

փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման

ք.Երևան 31 05 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մառք» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայության արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված 3) երկու օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկվում են նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ/ Կատարողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 110 000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, 2, 3 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Երևան, Պարույր Սևակի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
հ/հ 1570027609970100	հ/հ 1150019288418482
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 01236957
	էլ. Փոստ՝ marq.htg@gmail.com
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
31 05 2021 թ. կնքված
N ՀՀՌՅ-ՄԱԾՁԲ-05/21/1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	Կատարման	
						հասցեն	Ժամկետը
1	50531140	«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի (ք.Վանաձոր, Սարի-թաղ 3-րդ փողոց 16/1) վերակառուցման (սեյսմազինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում	դրամ	110 000	1	ՀՀ, ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը

* Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացում և եզրակացության տրամադրում: Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:
Փորձաքննությունն իրականացնելու համար պատվիրատուի կողմից կներկայացվի
•Նախագծային փաստաթղթեր (ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր),
• Նախահաշվային փաստաթղթեր (Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ):
Տեխնիկական առաջադրանք
Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:
Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատաս-խանության ապահովում:
Փորձաքննության միջոցով աշխատանքային նախագծի ներքո մշակված
1. գծագրական մասի և մասնագրերի,
2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում:
Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով:
Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանա-խահաշվային փաստաթղթերի փաթեթի համար փորձաքննության ապահովում, մասնագիտական եզրակացությունների առկայությամբ պարզ փորձաքննության արդյունքներով ամփոփ եզրակացության ներկայացում:
Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ խախտման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ.
Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝
1)նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը.
2)ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները.
3)հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները.
4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները,

առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է.
5)փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները.
6)քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով:
Բացի այդ, հետևյալ ձևակերպումները
1.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան,
2.Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին,
3.Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ..... հազ.դրամ նախահաշվային արժեքով,
4.Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը:
Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ:
Ամփոփիչ ձևակերպում.
1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ
2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ
3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին
4. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով;

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Երևան, Պարույր Սևակի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
h/h 1570027609970100	h/h 1150019288418482
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 01236957
	էլ. Փոստ՝ marq.htg@gmail.com
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

31 05 Հավելված N 2
2021 թ. կնքված
N ՀՀՌՅ-ՄԱԾՁԲ-05/21/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	50531140	«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի (ք.Վանաձոր, Սարի-թաղ 3-րդ փողոց 16/1) վերակառուցման (սեյսմազինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում					110 000	110 000	110 000	110 000	110 000	110 000	110 000	110 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիսբանկ» ԲԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Պարույր Սևակի 1
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
հ/հ 1150019288418482
ՀՎՀՀ 01236957
էլ. Փոստ՝ marq.htg@gmail.com

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
31 05 2021 թ. կնքված
N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____ _____ 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«Մ Ա Ռ Ք»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«M A R Q U E»
LIMITED
LIABILITI
COMPANY

0014, Երևան, Պ.Սևակի փող. 1
☎ 044 438042
marq.htg@gmail.com
P. Sevaki str. 1, Yerevan, 0014

25 հունիսի 2021թ. №58

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Մ. ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միլիտոնյան

Կից ներկայացնում եմ ընկերության կողմից իրականացված ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1 ծածկագրով նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացությունը:

Հարգանքով՝

Տնօրեն Գ. Հակոբյան

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Մուտք № 28-21-524
25 06 2021
1 թերթ/էջ

<<Մ Ա Ռ Ք>>
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

<<M A R Q U E>>
LIMITED
LIABILITI
COMPANY

0014, ք. Երևան, Պ. Սևակի փող., 1 ☎ 044 438042 P. Sevaki 1, Yerevan, 0014
marq.htg@gmail.com

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«Մ Ա Ռ Ք» ՍՊԸ տնօրեն
Գ. Հակոբյան
25.06.2021թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17598

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՏԱԳԻՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՍԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «02 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.» «ՄԱՌՔ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ԲԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 1

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ հասցեն ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ՊՈՒՇԱՐՅԱՆ
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

Պատվիրատու՝

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

Նախագծող՝

«ԲԻՄԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ
Լիցենզիա ՔՊԼ 17097
ՆԳՃ Վ. Ավետիսյան
Արտոնագիր ՃԲԴ - Ա – 085
Նախ. գլխ. կոնստ. Ա. Հովհաննիսյան
արտոնագիր ԿԵԴ –Ա2 - 007

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կատարման համար հիմք են հանդիսացել՝

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի կողմից տրված №75 առ 14 ապրիլի 2021թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ,

2. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ–ի (Լիցենզիա 16467) կողմից տրված ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր քաղաքի Սարի–թաղ 3-րդ փողոց 16/1 հասցեում գտնվող «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությանը պատկանող պրոֆիլակտիկ ծառայության շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:

3.Պատվիրատուի և նախագծողի միջև կնքված ՀՀՌՑ–ԳՀԽԾ2Բ–21/05-2 պայմանագիրը:

Փորձաքննության է ներկայացվել Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, որի համար ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջվում է պարզ փորձաքննության անցկացում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացված են երեք բաժնով, որոնցում ընդգրկված են՝

Բաժին 1. Աշխատանքային նախագիծ

Բաժին 2. Շինարարական աշխատանքների կազմակերպում

Բաժին 3. Նախահաշիվ

Այս բաժնում ընդգրկված են՝

1. Ելակետային տվյալներ
2. Ճարտարապետական մաս
3. Կոնստրուկտորական մաս
4. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր
5. Էլեկտրական մաս

1. **Ելակետային տվյալները** իրենց մեջ պարունակում են՝

- Լոռու մարզի Վանաձոր քաղաքային համայնքի կողմից տրված №75 առ14 ապրիլի 2021թ. նախագծման թույլտվությունը.
- «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի (ՊԼ 16467) տրված ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր քաղաքի Սարի–թաղ 3-րդ փողոց 16/1 հասցեում գտնվող «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությանը պատկանող պրոֆիլակտիկ ծառայության շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:
- Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական բնութագիրը
- Լիցենզիաներ, լիցենզիաների ներդիրներ և արտոնագրեր

Հատվածական լուսանկարներ (գոյություն ունեցող շինության) դրսից և ներսից:

2 Ճարտարապետական մաս

Այս մասի գծագրերը ներկայացված են 18 գծագրական թերթերով, որոնցում ամփոփված են՝ տեղադիրք և իրավիճակային հատակագիծ, անվանացանկ և բացատրագիր, գոյություն ունեցող հարկի հատակագիծ (չափագրություն), վերափոխված հարկի հատակագիծ, հարկի հատակագծեր սենքերի անվանումով և հատակների իրականացումով, սենյակների հարդարման աշխատանքների մասնագիր, գոյություն ունեցող կառույցի և նոր կառուցվողի լայնական և երկայնական կտրվածքներ, գոյություն ունեցող կառույցի ճակատներ, նոր իրականացվող շենքի ճակատներ, տանիքի և տանիքի կանգնակների հատակագիծ, տանիքի ծպեղնատոքերի և կավարամածի իրականացման հատակագծեր, տանիքի երկայնական և լայնական կտրվածքներ, հանգույցներ, կոնստրուկտիվ միացումներ, տանիքի ձեղնապատուհանի իրականացման գծագիր և մասնագիր, դռների և պատուհանների գծագրերը և մասնագրերը:

Վերակառուցվող շենքը հատակագծում ունի ուղղանկյուն ձև ու 19.4x18.4մ արտաքին չափեր, իսկ բարձությունը կազմում է 3,65 մ(քիվի վերին սահմանը): Ի սկզբանե շենքը ունեցել է 19,4x24.4մ հատակագծային չափեր, սակայն 1988թ. երկրաշարժի ժամանակ մի թռիչքը փլուզվել է:

Նախագծով նախատեսված են հետևյալ աշխատանքները՝

- Քանդել 4-րդ առանցքով և 5,8x19.4մ հատակագծային չափերով հատվածի պատերը և ապամոնտաժել ծածկի սալերը, հանձնել Պատվիրատուին
- Ուժեղացնել 19,4x12.4 հատակագծային չափերով հատվածը

Նախատեսված են՝

- Գոյություն ունեցող պատերի ուժեղացում ե/բ միաձույլ շապիկով, նախապես մաքրելով պատերի վրայի հարդարման շերտը, բացելով շարի դարձերը ոչ պակաս 2 սմ դեպի շարի խորքը
- Հավաքովի ե/բ ծածկի սալերի ուժեղացում՝ համատարած միաձույլ ե/բ սալով՝ նախապես մաքրելով ամբողջ մակերևույթը ջրի բարձր ճնշման շիթով.
- Իրականացնել նոր լայնական պատերի կառուցում տուֆ քարով կանոնավոր ձևի ամրանավորված շարով
- Իրականացնել նոր միջնորմերի ամրանավորված շար 20 սմ հաստությամբ քանդված պատերի տուֆից
- Կարճացնել ա/մ սպասարկող հորը
- Ավտոկայանատեղիներում նախատեսված են նոր բետոնե հատակների իրականացում, իսկ պատերը և առաստաղը ուժեղացման աշխատանքներից հետո սվաղել ց/ա շաղախով և թողնել առանց վերջնական հարդարման շերտի Պատվիարտուի համաձայնությամբ
- Նախատեսվում է ոչ տեխնիկական մասում հատակի նիշի բարձրացում 30 սմ խոշորահատիկ 5-40մմ ֆրակցիայի բազալտե խճով գոյությունունեցող բետոնե հատակների վրա.
- Նախատեսված են թվով երկու աշխատասենյակներ և սանհագույց և մեկ արհեստանոց
- Քանդել գոյություն ունեցող փայտայա տանիքը և կառուցել նոր քառալանջ տանիք գունավոր ցինկապատ թիթեղից ծածկույթով

- Սեյսմազինվածության իրականացման շրջանակներում նախատեսվում է երեք լայնական պատերի իրականացում՝ քանդվող տեղամասի պիտանի տուֆ քարով և ե/բ միաձույլ շրջանակով

- Ավտոկայանատեղիրում նախատեսված է փակել մեջտեղի պատուհանը՝իրականացնելով 40 սմ հաստությամբ տուֆե քարով շար
- Բացել բացվածքներ Պ-1 և Պ-4, իսկ ՊՏ-2 պատուհանի բացվածքը տուֆե "կանոնավոր" շարով փակել
- Բացվածքներում ուժեղացման աշխատանքներից առաջ տեղադրել ներդիր էլեմենտ մետաղական անկյունակ 50*5 մմ և այն եռակցել "շապիկի" անկյունակների հետ ճաղաշարերի վերատեղադրման համար
- Իրականացնել ամրանավորված միջնորմեր առկա տուֆ քարից 20 սմ հաստությամբ

- Սանհանգույցում նախատեսված է իրականացնել պլաստմասսե շերտաթերթերով կախովի ՊՎՔ առաստաղ

- Բոլոր պատուհանները նախատեսված են մետաղապլաստե պրոֆիլներով սպիտակ գույնի երկշերտ ապակեփաթեթով
- Դրսի դուռը մետաղական է՝ երկկողմանի երեսապատված ջրադիմացկուն լամինատով և եռաստիճան փականներով
- Պատուհանների առկա ճաղավանդակները ապամոնտաժել, ներկել և վերատեղադրել
- Գոյություն ունեցող պատուհանների քանդումից առաջ ապամոնտաժել առկա մետաղական ճաղաշարերը հետագայում վերատեղադրելու նպատակով.
- Ճաղաշարերը մաքրել կոռոզիայից և քայքայված ներկից մետաղական խոզանակով ու ներկել երկտակ յուղաներկով՝ նախապես մշակելով հակակոռոզիոն գրունտով
- Առկա մետաղական դարպասները մաքրել կոռոզիայից և հակակոռոզիոն ներկից հետո յուղաներկել երկտակ բարձրորակ յուղաներկով
- Տանիքի փայտա կոնստրուկցիաները նախատեսված են փշատերև ծառերից՝ 1 տեսակի և 15%-ից ոչ ավել խոնավության պարունակությամբ. ցանկալի է առավելագույնս հյուսիսային պայմաններում աճած ծառերից

Որմնափայտը կապակցել իրականացվող ե/բ գոտու հետ մետաղական ինքնաձգվող հեղյուսներով համաձայն գծագրի
Կանգնակների տակ ամբողջ երկայնքով իրականացնել տախտակով փոված: Փոված և որմնափայտը տեղադրել եռաշերտ տոլի վրա հպման ամբողջ մակերեսով
Նախատեսված է ձյան արգելակիչներ տանիքի թիթեղի գույնի L=2000մմ երկարությամբ:

Դիտողություն գլխավոր հատակագծերում նշված չեն մասշտաբները;

3 Կոնստրուկտորական մաս

Այս մասի գծագրերը ներկայացված են 19 գծագրական թերթերով, որոնցում ամփոփված են՝ անվանացանկ և բացատրագիր, ուժեղացման ենթակա և նոր կառուցվող պատերով հատակագծեր, միաձույլ ե/բետոնե հեծաններ ՀԾ–1,ՀԾ–2, ՀԾ–3 և ՀԾ–4 իրենց կտրվածքներով և մասնագրերով, լայնական պատերի հիմքերի հատակագիծ և կտրվածքներ, միաձույլ ե/բետոնե

ծածկի սալի հատակագիծ, կտրվածք և մասնագիր, միջպանելային հարթ կարկասների տեղադրման հատակագիծ, կտրվածք և մասնագիր, լայնական պատեր B-B առանցքով և հանգույցներ, ե/բետոնե միաձույլ շրջանակ Շ-1, կտրվածքներ և մասնագիր, միաձույլ ե/բետոնե սյուն, կետային հիմք և մասնագիր, դռների և պատուհանների բացվածքների ուժեղացում, լայնական և երկայնական պատերի միացման ամրանների տեղադրման հանգույցներ, միջնորմների ամրակապումը պատերի և ծածկի հետ, բարավորների իրականացման գծագիրը միջնորմների և ինքնակրող պատերի մեջ իրենց կտրվածքներով և մասնագրերով:

Կոնստրուկտորական մասի գծագրերը մշակվել են համաձայն՝

1. **Շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ եզրակացություն**
2. **Նախագծային փաստաթղթերը մշակելիս հիմք են ընդունվել ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերը**

Կառույցը հատակագծում ունի ուղղանկյուն ձև ու 19.4x18.4մ արտաքին չափեր, իսկ բարձությունը կազմում է 3,65 մ(քիվի վերին սահմանը): Ի սկզբանե շենքը ունեցել է 19,4x24.4մ հատակագծային չափեր, սակայն 1988թ. երկրաշարժի ժամանակ մի թռիչքը փլվել: Նախագծով նախատեսված է քանդել 4-րդ առանցքով և 5,8x19.4մ հատակագծային չափերով հատվածը և ուժեղացնել 19,4x12.4 հատակագծային չափերով հատվածը;

Շենքի կոնստրուկտիվ սխեմա

Շենքի հիմքը ժապավենային է խամքարերետոնից,

Ուղղահայաց կրող տարր որպես հանդիսանում են լայնական և երկայնական պատերը, որոնք իրակացված են կանոնավոր "Արթիկ" տեսակի տուֆ քարից, քարերի կապակցող շաղախը տեղ-տեղ բացակայում է կամ քայքայված է:

Ծածկը իրակացված է հավաքովի կլոր անցքավոր ծածկի սալերով գործարանային արտադրության, որոնք միմյանցից տեղադրված են 80-100 մմ հեռավորության վրա, իսկ միջպանելային հեռավությունը լցված է շաղախով: Ծածկի պանելները կրող պատերի վրա հենված են 80 մմ: Լայնական կողերով սալը ամրացված չեն լայանական պատերին:

Տանիքը իսկզբանե եղել է քառալանջ՝ փայտե կրող կոնստրուկցիաներով և ասբոշիֆերից ծածկույթով, որը սակայն կիսաքանդ վիճակում է:

Պատերի շարը եզրափակվում է տուֆե 20 սմ հաստությամբ տուֆե քիվով, տեղ-տեղ բացակայող տեղամասերով:

Ուժեղացում

Հաշվի առնելով շենքի գործառնական նշանաությունը և առկա եզրակացությունը իրականացվել է հետևյալ միջոցառումներ

- Գոյություն ունեցող լայնական և երկայնական պատերը ամրացնել ե/բ միաձուլլ 10 սմ հաստությամբ A500C 8 մմ տրամագծով ամրանային ցանցով, 300 մմ քայլով շապիկով՝ ներսի մակերևույթին, և 40մմ հաստությամ Ց/Ա Մ200 մակնիշի շաղախով և գործարանային եռակցված Bp 150x150x5մմ ցանցով, որոնք սկսում են հիմքից, անընդհատ են և ծածկի սալի մակարդակում եզրափակվում են միաձույլ հակասեյսմիկ գոտիների մեջ:Ամրանային ցանցերը կապվում են միմյանց հետ միայն ամրալարով և հպվում պատին, իսկ արտաքին և ներքին ցանցերի համատեղ աշխատանքը պատի հետ ապահովվում է պատեր մեջ միջանցիկ ամրաններով՝8 մմ A500C, որոնք պատերում պետք է տեղադրել ցեմենտային շաղախի ներարկումով: Bp ցանցը հպել արտաքին շարվածքին և ամրացնել ինքնալարվող հեղյուսներով: Հիմքերում ամրանները խարսխել հիմքի բետոնի մեջ 10 սմ խորությամբ և ցեմենտային շաղախի ներարկումով: Ներքին պատերի ամրանային ցանցի 1000 մ քայլով հատում է ծածկի սալը և խարսխվում սեյսմիկ գուտում:

- Շենքի տարածական կոշտությունը ապահովվելու համար նախագծով նախատեսված են երեք լայնական պատեր 40 սմ հաստությամբ, շարի ամրանային ցանցով: Նոր կառուցվող պատերը արտաքին պատերի հետ միացվում են ամրանային ձողերով, որոնք ճակատային հատվածներում եռակցվում են ամրանային ուղղանկյուն ցանցին: Բոլոր նոր և գոյություն ունեցող պատերը անկյուններում իրար հետ կապակցում են ամրանային ցանցով, իսկ ծածկի հարթությունում ե/բ միաձույլ հեծաններով, որոնք տեղադրելուց առաջ ծածկի սալերը 40 սմ լայնությաբ պետք խնամքով քանդել՝ նախապես կտրելով հատուկ սկավառակով:
- Նոր կառուցվող պատերի հիմքերը նախատեսված են ժապավենաձև խամքարեբետոնից 60/40 հարաբերակցությամբ, որոնք կապվում են գոյություն ունեցող ժապավենային հիմքերին: Նոր հիմքերը անհրաժեշտ է տեղադրել և խարսխել գոյություն ունեցող հիմքերի հետ նույն նիշում: Նոր իրականացվող հիմքերը հիդրոմեկուսացնել բիտումի երկտակ մածկապատումով
- Ծածկի սալերի կոշտությունը և կապը կրող ուղղահայաց կոնստրուկցիաներին ապահովվելու համար անհրաժեշք է քանդել քիվը, և տեղում տեղադրել միաձույլ ե/բ գոտի շենքի ամբողջ պարագծով: Քանի որ միջպանելային լիցքերը քայքայված են և հեռավությունը բավական է հարթ ամրանային կարակասի տեղադրաման համար, ուստի նախատեսված է միջպանելային տարածքը մաքրել քայքայված բետոնից և տեղադրել ամրանային կարկասներ: Նախագծով նախատեսված է միաձույլ սալի իրակացում ծակի ամբողջ մակաերեսով 5 սմ հաստությամբ թեթև բետոնով 8 մմ A500C 200 մմ քայլոբվ ամրանային ցանցով; Նոր իրականացվող ե/բ կոնսրտրուկցիաների ամրանները, ինչպես նաև հարթ ամրանային կարկասները ծածկի սալի մակարդակում կապվում են ծածկի սալի ամրանային ցանցի հետ:
- Դռների և պատուհանների բացվածքների ուժաղացումը իրականացվում է մետաղական անկյունակներով՝ "Շապիկ" -ով
- Ա/մ տեխնիկական սպասարկման հորի կարճացումը նախատեսվում է իրականացնել՝ կարճացվող տեղամասում հիմքից ավելացած գրունտների և քանդված տեղամասի բետոնաբեկորային ոչ ավել 100 մմ մեծությամբ քարերի հետլիցքով և տոփանում, իսկ որպես նոր սահմանային հենապատ նախատեսվում է 20 սմ B15 դասի բետոն մինչև հատակի նիշը:

Պատերի ուժեղացման աշխատանքները իրականացնելիս պարտադիր

Իրականացնել ամրանային ցանցի տեղադրում, նոր կառուցվող պատերի և շրջանակի ամրանների ամրակապում ցանցի հետ, որից հետո միայն թույլատրելի է բետոնացման աշխատանքներ:

Նախագծով նախատեսված բոլոր նյութերը պետք լինեն նոր, համապատասխանեն ՀՀ-ում գործող ստանդարտներին կամ լինեն ավելի առաջադեմ ստանդարտներին համապատասխանող: Կապալառուն նյութերի սերտիֆիկատները և լաբորատոր փորձարկումները պետք է տրամադրի Պատվիրատուին:

Բետոնի որակի համապատասխանությունը նախագծին անհրաժեշտ է իրականացնել սերտիֆիկացված լարորատորիայում՝ բետոնի փորձանմուշների ուղիղ սեղման եղանակով:

Ամրանների տեղադրումից հետո կատարել թաքնված աշխատանքների ակտերի կազմում, նոր միայն սկսել բետոնային աշխատանքները:

Դիտողություն բացակայում է միաձույլ ե/բետոնե շապիկի և գոյություն ունեցող հիմքերի միացման հանգույցները:

4 Ջրամատակարարում և ջրահեռացում

Այս մասի գծագրերը ներկայացված են 4 թերթով, որոնցում ամփոփված են՝ Բացատրագիր,սանհանգույցի հատակագիծ սարքավորումներով և ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերով, տաք և սառը ջրագծերի ներքին կոյուղատարի սխեմաները, ջրահեռացման արտաքին ցանցի հատակագիծ և կտրվածք,ֆիլտրացիոն հորի հատակագիծ և կտրվածք, կառուցվող ե/բետոնե դիտահորի հատակագիծ, կտրվածք և հանգույցներ, ջրագծի մուտքային հատակագիծ և երկայնական կտրվածք, պոլիմեր ավազային հորի հատակագիծ և կտրվածքներ ջրաչափական հանգույցով:

Նախագիծը կատարված է համաձայն գործող ՇՆ և 42.04-01.85-ի նորմերի:

Սառը ջրի սնուցումը քաղաքային ջրմուղի Φ63մմ ցանցից Φ20մմպոլիէթիլենային խողովակով: Ջրաչափական հանգույցը նախատեսված է տեղադրել շենքից դուրս նոր կառուցվող դիտահորի մեջ: Ցանցի վրա դիտահորի ներսում նախատեսված է փական Φ20մմ, ջրաչափ և ֆիլտր Φ20մմ:

Տաք ջրամատակարարումը նախատեսված է անհատական էլեկտրաջրատաքացուցիչով 50լ տարողությամբ:

Ջրամատակարարման ներքին ցանցի համար նախատեսված են Φ20մմպոլիպրոպիլենե խողովակներ:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու ջրհավաք հոր: Հոր նախատեսված է 1000մմ տրամագծով ֆիլտրային շերտի վրա:

Կենցաղային կոյուղու ցանցի համար նախատեսված է Φ110մմ պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում:

Դիտողություն՝ բացակայում է ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների տեղադրման խրամուղիների լայնական կտրվածքները:

5 Էլեկտրական մաս

Այս մասի գծագրերը ներկայացված են 6 գծագրական թերթերով, որոնցում ամփոփված են՝ Անվանացանկ, բացատրագիր, ուժային վահան MDP, ուժային էլեկտրամատակարարման հատակագիծ, էլ. լուսավորման հատակագիծ, մալուխային վաքերի տեղակայման և հողանցման հատակագիծ, հողանցման հանգույցի կտրվածք և մալուխի անցկացման խրամուղու լայնական կտրվածք:

Ուժային էլեկտրասնուցման համակարգերի նախագիծը մշակված է համաձայն ԷՍԿ 7 (ПУЭ7), ՀՀ էլեկտրաէներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի, ՇՆ և 4 III-80, ՇՆ և 43.01.01-85, ՇՆ և 43.05.06-85 շինարարական նորմերի և ՀՀ տարածքում գործող այլ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շենքում նախատեսված է 1 հատ եռաֆազ սպառիչի միացման կետեր, հետագայում սպառիչներ միացնելու համար:

Սանհանգույցում նախատեսված է էլեկտրաջրատաքացուցիչ ՅԿՎՏ հզորությամբ:

Ավտոկայանատեղիներում և արհեստանոցներում նախատեսված են միաֆազ վարդակներ՝ մինչև ՅԿՎՏ հզորությամբ:

Էլեկտրաէներգիայի բաշխումը իրականացվում է MDP մուտքային բաշխիչ պահարանի միջոցով, որի էլեկտրասնուցումը իրականացվում է մոտակա ենթակայանից ալյումինե 4*70 մալուխի միջոցով:

Շենքի լուսահաշվարկը իրականացվել է ՀՀՇՆ 22-03-2017<<Արհեստական և բնական լուսավորում>> շինարարական նորմին համապատասխան:

Շենքի հողանցման և պոտենցիալների հավասարեցմանհամար նախատեսվում է հողանցման կոնտուրի իրականացում:

Բաժին 2. Շինարարական աշխատանքների կազմակերպում

Այս մասում ներկայացված են՝ շին. աշխատանքների կազմակերպման ընդհանուր դրույթներ, հիմնական շին. մեքենաների և մեխանիզմների պահանջարկ, շին. աշխատանքների որակի հսկում, անվտանգության տեխնիկայիհարցեր և հակահրդեհային միջոցառումներ, աշխատանքների իրականացումը ձմեռային պայմաններում, շինարարությունն իրականացնելու համար անհրաժեշտ անձնակազմը և աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը:

Դիտողություն բացակայում է շին. կազմակերպման քանդման աշխատանքների և կառուցման աշխատանաների գլխավոր հատակագիծը, աշխատանքային ռեսուրսների, ֆինանսական ռեսուրսների բաշխման գրաֆիկները, ժամանակավոր կառույցների տեղադրման ցանկը և հատակագիծը, անհրաժեշտ նախնական ջրի քանակի, օգտագործվող հոսանքի ծախսերի հաշվարկը:

Բաժին 3. Նախահաշիվ

Շինարարական աշխատանքների հաշվարկը կատարված է ՀՀ քաղաքաշինության նախարարի N 41-Ն առ 16.06.2008թ. հրամանով հաստատված՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգի հիման վրա:

Վերադիր ծախսերը հաշված են ուղղակի ծախսերի գումարից՝	13,3%
Շահույթը հաշված է բոլոր ծախսերի գումարից՝	11,0 %
Նյութերի արժեքները բազմապատկված են հետևյալ գործակիցներով՝	
ա/ նախահաշվում չհաշվարկվող ոչ հիմնական նյութերի արժեք՝	q=1,05
բ/ պահեստավորման և նյութերի նախապատրաստման ծախսեր՝	q=1,02
գ/ տրանսպորտային ծախսեր նյութերի նկատմամբ՝	q=1,0893,
Ավելացված արժեքի հարկը հաշվարկված է բոլոր ծախսերի նկատմամբ՝	20,0%

Աշխատավարձը հաշվարկված է 1984թ. նորմատիվային աշխատատարության հիման վրա, ընդունվելով շինարարությունում զբաղված բանվորների միջին (ամսեկան) աշխատավարձը– 196 878 /դրամ/, կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը՝ 1818,73:

Մեքենաների շահագործման ծախսերի հաշվարկը կատարված է 1984թ. նորմատիվային ծախսերի հիման վրա՝ կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը՝ 2651.36:

Նյութերի արժեքների հաշվարկը կատարված է 1984թ. նորմատիվային ծախսի և 2021թ. թիվ-4 ինֆ. տեղեկագրի հիման վրա, մշակված ՀՀ Էկոնոմիկայի նախարարության "Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից և շուկայի:

Ըստ փորձաքննության եզրակացության նախահաշվի կազմումը ամբողջովին համապատասխանում է ՀՀ Օրենսդրության սահմանված կարգին:

Ըստ հավաք նախահաշվի լիմիտավորված տոկոսադրույքների՝ Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի

վերակառուցման և վերանորոգման արժեքը ըստ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում է՝ 45 045 644 (քառասունհինգ միլիոն քառասունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 7 507 607 (յոթ միլիոն հինգ հարյուր յոթ հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամ:

Դիտողություններ տեղային նախահաշվում մետաղ-պոլիէթիլենե անցում տրամագծերը չեն համապատասխանում նախագծով տրված խողովակների տրամագծերին: Ամփոփ նախահաշվում ժամանակավոր շենքեր և շինություններ աշխատանքների տոկոսը պետք է լինի Լոռու մարզի համար 0,8%: Կլիմայական պայմանների ազդեծությունը Լոռու մարզի համար պետք է լինի 1,2*0,8%(հրաման 68 առ 21.08.2001), չնախատեսված ծախսեր 3%(N05-Ն առ 14.01.2008):

Նշված բոլոր դիտողությունները ուղղվել են աշխատանքային կարգով:

Շինարարության ընթացքում, կախված նյութերի արժեքների և աշխատավարձի փոփոխությունից, առաջարկվում է կատարել նախահաշվի վերահաշվարկ:

Եզրակացություն՝

Ուսումնասիրելով ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ Օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝

Գ. Հակոբյան

Մ. Պետրոսյան

Լ. Զքմեջյան

Տ. Հակոբյան

«ՄԱՌՔ» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 3
<<31>> մայիսի 2021թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1ծածկագրով պայմանագրի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ
<<Մառք>> ՍՊԸ
ք. Երևան, Պարույր Սևակի 1
Հ/հ 1150019288418482
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01236957

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ
ք.Երևան,Նորք Հովսեփյան 95
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

25 հունիսի 2021թ.

Պայմանագրի անվանումը	Փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման
Պայմանագրի կնքման ամսաթիվ	31 մայիսի 2021թ.
Պայմանագրի համարը՝	ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1

Պատվիրատուն՝ և Պայմանագրի կողմը՝ ի հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 14 հունիսի 2021 թ. դուրս գրված Բ 2276369465 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

Հ/հ	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազ.դրամ/	Վճարման ժամկետը
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Աշխատանքների կատարման ժամկետը	փաստացի		
1	փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ	<<ՀՀՌՑ>> ՓԲԸ Լոռու տարածքային բաժնի Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ	1	1	31.05.2021-10.06.2021	31.05.2021-25.06.2021	110.0	հունիս 2021թ.

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ Գ. Հակոբյան

Ծառայությունը ընդունեց

_____ Մ. Միլիտոնյան

Digitally signed by SAHAKYAN GURGEN 1802780378
Date: 2021.06.30 12:22:43

Հավելված 3.1
<<31>> մայիսի2021թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու
փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Հայաստանի Հեռուստատեսային և Ռադիոհաղորդիչ Ցանց>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Մարք>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021թ. մայիսի 31-ին կնքված N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1 պայմանագրի շրջանակներում Կատարողը 2021թ. հունիսի25-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ	1	Դրամ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____ Գ.Հակոբյան

Ընդունեց

_____

Digitally signed by HAKOBYAN VAHAG 1814600108
Date: 2021.06.30 12:21:16

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
14	Հունիս	2021 թ.		Բ	2276369465
[4] Մատուցման ամսաթիվը					
14	Հունիս	2021 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	31 Մայիս, 2021 թ.	ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/1

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 2 3 6 9 5 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ՄԱՌՔ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 1150019288418482
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Պ. ՍԵՎԱԿԻ Փ. 1
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 1 5 0 1 8 9 8
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 1 8 9 8 / 1
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[17] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ N 1570027609970100
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր՝ Համար: Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ	դրամ	1	110000		110000
Ընդամենը						110000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HAKOBYAN GURGEN 3402480042

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ MILITONYAN MUSHEGH 1412800234

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/06/2021 17:22:51

01/07/2021 12:43:04